

Ավտոմեքենաների լվացման կետերի վերաբացման Արձանագրություն

Վերջին թարմացումներ.

12/2/20: (Փոփոխությունները նշված են դեղինով)

- Խցիկներում աշխատող աշխատակիցները պետք է դեմքի ծածկոցներ կրեն՝ ներառյալ միջնապատերով հագեցած խցիկներում: Սա ժամանակավոր միջոց է՝ համաձայն ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ժամանակավոր ԶՐԱՄԱՆԻ, որը տրվել է 2020 թ.-ի Նոյեմբերի 28-ին: Պահանջը ուժի մեջ է 2020 թ.-ի Նոյեմբերի 30-ի առավոտյան ժամը 12:01-ից (PST) մինչև 2020 թ.-ի Դեկտեմբերի 20-ի երեկոյան ժամը 11:59-ը (PST):
- Ուսուցիչ կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն և հնարավորության դեպքում դա անեն դրսում: Խցիկում կամ աշխատավայրում ուսուցիչ կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուսուցիչ:

11/28/20.

- Ավտոմեքենաների վաճառքի կետերը սահմանափակվում են ներսում 35% առավելագույն զբաղվածությամբ՝ համաձայն Տանն Ավելի Անվտանգ COVID-19-ի Վերահսկման ժամանակավոր Նպատակային Զրամանի, որը ուժի մեջ է 2020 թ.-ի Նոյեմբերի 30-ի առավոտյան ժամը 12:01-ից մինչև 2020 թ.-ի Դեկտեմբերի 20-ի երեկոյան ժամը 23:59-ը:
- Թարմացվել է՝ պահանջելու, որ ստուգումները ներառեն անհատի ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո գտնվելու ստուգումը:

Լոս Անջելես Շրջանի Զանրային Առողջապահության Վարչությունը (Զանրային Առողջապահություն) կոչ է անում հասարակությանը, բոլոր գործարարներին և համայնքային կազմակերպություններին **օգնել դանդաղեցնել COVID-19-ի տարածումը Լոս Անջելեսի Շրջանում:**

Լոս Անջելես Շրջանում COVID-19 դեպքերի ընթացիկ ալիքի վերացման համար Զանրային Առողջապահությունը խնդրում է բոլոր բիզնեսներին և հաստատություններին ձեռնարկել համապատասխան քայլեր՝ **սահմանափակելու ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց հետ շփումները, խրախուսելու դեմքի ծածկոցների կիրառումը և հետևելու վարակի վերահսկման բոլոր կանխարգելիչ միջոցառումներին:** Զետևյալ խնդիրներն առաջնային անհրաժեշտություն են ներկայացնում և պետք է ապահովվեն բոլոր աշխատակիցների և հաճախորդների կողմից, որպեսզի նվազեցվի վարակի տարածման վտանգը, մինչ մենք անցում ենք կատարում դեպի ավելի բաց փուլ.

- (1) Պաշտպանել և ապահովել աշխատակիցների և հաճախորդների առողջությունը,
- (2) Ապահովել համապատասխան սոցիալական հեռավորություն,
- (3) Ապահովել վարակի տարածման համապատասխան կառավարումը,
- (4) Պահպանել հասարակության հետ հաղորդակցությունը,
- (5) Ապահովել ծառայությունների անաչառ հասանելիությունը:

Նշված հինգ ոլորտները պետք է իրականացվեն, մինչ ձեր հաստատությունը մշակում է վերաբացման այլ արձանագրություններ:

Բոլոր բիզնեսները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրել, թե ինչու որևէ չիրականացված

միջոցառում չի վերաբերում իրենց բիզնեսին:

Բիզնեսի անունը՝ _____

Հաստատության հասցեն՝ _____

Առավելագույն
զբաղվածություն՝ **համաձայն**
35% Չբաղվածության
Սահմանի՝ _____

Հաստատության՝
հանրությանը հասանելի
տարածքի մոտավոր
մակերեսը՝ _____

**Ա. ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒԻՄ ԳՈՐԾՈՂ՝ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ
ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՆՇԵԼ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ
ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ)**

- Բոլոր նրանց, ովքեր կարող են իրենց աշխատանքային պարտականությունները կատարել տնից, պետք է հանձնարարվի այդպես վարվել:
- Անձնակազմի խոցելի անդամները (65-ից բարձր տարիք ունեցող անձինք, հղի կանայք և քրոնիկական հիվանդություններ ունեցող անձինք) հնարավորության դեպքում ստանձնում են այնպիսի աշխատանք, որ կարելի է կատարել տնից, և պետք է իրենց բուժաշխատողի կամ աշխատանքային առողջապահական ծառայությունների հետ քննարկեն ցանկացած մտահոգություն, որպեսզի կայացնեն աշխատավայր վերադառնալու վերաբերյալ համապատասխան որոշումներ:
- Աշխատանքային գործընթացները հնարավորության սահմաններում վերաձևակերպվում են այնպես, որ աշխատակիցների՝ տնից աշխատելու հնարավորությունները մեծանան:
- Ապահովվում են լրացուցիչ պաշտպանիչ միջոցներ, օրինակ՝ աշխատանքային պարտականությունների հերթափոխներ, որոնք թույլ են տալիս խոցելի խմբի աշխատակիցներին աշխատել տնից:
- Կազմվել են հաջորդական, կազմակերպված կամ հերթափոխային գրաֆիկներ՝ առավելագույնի հասցնելու ֆիզիկական հեռավորությունը:
- Բոլոր աշխատակիցներին ասվել է չգնալ աշխատանքի, եթե հիվանդ են կամ COVID-19-ով վարակված անձի հետ են շփվել: Աշխատակիցները գիտակցում են, որ պետք է հետևել Հանրային Առողջապահության Վարչության՝ ինքնամեկուսացման և կարանտինի ուղեցույցին, եթե կիրառելի է: Աշխատավայրի բացակայության քաղաքականությունը վերանայվել և փոփոխվել է՝ ապահովելու, որ աշխատողները չտուժեն, եթե հիվանդության հետևանքով տանը մնան:
 - Բոլոր աշխատակիցներին տրամադրվում է տեղեկատվություն գործատուի կամ պետության կողմից հովանավորվող բացակայության նպաստների մասին,

որոնք աշխատակիցը միգուցե իրավունք ունենա ստանալու, որը ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Տես հավելյալ տեղեկություններ՝ հիվանդության հետևանքով բացակայությունների աջակցության պետական [ծրագրերի](#) և COVID-19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների վերաբերյալ, ներառյալ՝ աշխատողների հիվանդության հետևանքով բացակայությունների իրավունքները [Ընտանիքների Կողմից Կորոնավիրուսի Առաջին Արձագանքի Ակտի](#) և աշխատողների փոխհատուցման նպաստների իրավունքները և մարտի 19-ից հուլիս 5-ն ընկաց ժամանակահատվածում տեղի ունեցած COVID-19-ի բռնկումների աշխատանքի հետ կապված կանխավարկածը՝ համաձայն Նահանգապետի [N-62-20 Գործադիր Հրամանի](#):

- Տեղեկացվելով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների թեստի արդյունքը դրական է, կամ նրանք ունեն COVID-19-ի ախտանիշների նման ախտանիշներ (հիվանդ), գործատուն պետք է ունենա պատրաստի ծրագիր կամ արձանագրություն, որպեսզի «հիվանդ(ներ)ը» [ինքնամեկուսանա\(ն\) տանը](#), ինչպես նաև պահանջի, որ բոլոր աշխատակիցները, որոնք աշխատավայրում շփվել են «հիվանդի» հետ, անմիջապես [ինքնակարանտինի ենթարկվեն](#): Գործատուի ծրագիրը ներառում է COVID-19-ի թեստավորման հասանելիություն կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար՝ պարզելու, թե արդյոք աշխատավայրում եղել են շփման լրացուցիչ դեպքեր, որոնք կարող են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տես՝ Հանրային Առողջապահության ուղեցույցը [Աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու վերաբերյալ](#):
- Այն դեպքում, երբ 14 օրվա ընթացքում աշխատավայրում 3 կամ ավելի դեպք է հաստատվում, գործատուն պետք է այդ խմբի վերաբերյալ գեկուցի Հանրային Առողջապահության Վարչությանը՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներով: Եթե աշխատավայրում վարակված խումբ է հայտնաբերվում, Հանրային Առողջապահության Վարչությունը խմբի նկատմամբ արձագանք կնախաձեռնի, որը ներառում է՝ վարակի վերահսկման ցուցումների և խորհուրդների տրամադրում, մասնագիտական օժանդակություն և հաստատության համար առանձնահատուկ վերահսկման միջոցառումներ: Կնշանակվի խմբի հետազոտման գործի ղեկավար՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:
- [Աշխատակիցների ստուգում](#) է իրականացվում մինչև նրանց աշխատավայր մուտք գործելը: Ստուգումը ներառում է հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև պարզաբանում, **թե արդյոք գտնվում է ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո**: Նշված ստուգումներն իրականացվում են հեռակա կամ անձամբ՝ աշխատակցի ժամանման պահին: Աշխատավայրում հնարավորության դեպքում իրականացվում է ջերմաչափում:
- Բոլոր աշխատակիցներին, որոնք շփում ունեն հանրության կամ այլ աշխատակիցների հետ անվճար առաջարկվում է պատշաճ դիմակ, որը ծածկում է քիթն ու բերանը: Աշխատակիցները պետք է կրեն դիմակները ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Այն աշխատակիցները, որոնք բուժաշխատողի կողմից դիմակ չկրելու հրահանգ են ստացել, պետք է կրեն դեմքի վահան, որի ներքևի եզրին կտոր է ամրացված, որպեսզի համապատասխանեն Նահանգային Հրահանգներին, եթե իրենց վիճակը թույլ է տալիս: Ցանկալի է, որ կտորը տեղավորվի կզակի տակ: Չի կարելի օգտագործել միակողմանի փականներով դիմակներ: Պարտադիր չէ կրել դիմակ, եթե աշխատակիցը գտնվում է միայնակ առանձին

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ

աշխատասենյակում կամ անհատական աշխատանքային տարածքում, որտեղ կա կանգնած դիրքում աշխատակցի հասակը գերազանցող ամուր միջնապատ:

Համաձայն COVID-19-ի ՎԵՐԱՅՍԿՄԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԻ՝ ԿԱՐԳ 1 ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՐՁԱԳԱՆՔԻ, որը տրվել է 2020թ.-ի Նոյեմբերի 28-ին, բոլոր աշխատակիցները պետք է դեմքի ծածկոցներ կրեն, բացառությամբ այն պահերի, երբ միայնակ աշխատում են անհատական գրասենյակներում, որոնց դռները փակ են, կամ երբ ուտում կամ խմում են: Նախկինում կատարված բացառությունը, որը կատարվել է աշխատողների հասակը գերազանցող ամուր միջնապատերով խցիկներում աշխատող աշխատողների համար, փոխարինվում է ժամանակավոր հրամանի գործող ժամանակահատվածում՝ 2020 թ.-ի Նոյեմբերի 30-ի առավոտյան ժամը 12: 01-ից (PST) մինչև 2020թ.-ի Դեկտեմբերի 20-ի երեկոյան ժամը 23:59-ը (PST):

Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին չի խրախուսվում ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջումների ժամերը, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը մյուսներից ավելի շատ հեռավորություն և միջնապատեր է տրամադրում:

Աշխատակիցներին հանձնարարվում է ամեն օր լվանալ կամ փոխարինել իրենց դիմակները:

Բոլոր անհատական աշխատասենյակները բաժանված են առնվազն 6 ոտնաչափ հեռավորությամբ:

Ընդմիջումները կազմակերպվում են հերթով, որպեսզի ընդմիջման սենյակներում հնարավոր լինի պահպանել ֆիզիկական հեռավորություն:

Բոլոր աշխատակիցներին, վաճառողներին և առաքման անձնակազմին տրվել են հրահանգներ՝ ֆիզիկական հեռավորություն պահպանելու և այլ մարդկանց շրջապատում դիմակ կրելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընդմիջման սենյակները, պետքարաններն ու այլ ընդհանուր տարածքները հաճախակի ախտահանվում են հետևյալ ժամանակացույցով.

○ Ընդմիջման սենյակներ _____

○ Պետքարաններ _____

○ Այլ _____

Ախտահանիչներն ու այլ պարագաները աշխատակիցների համար հասանելի են հետևյալ վայր(եր)ում՝ _____

COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի մաքրման միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում՝ _____

Օճառն ու ջուրը հասանելի են բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում՝ _____

- Աշխատակիցներին թույլ է տրվում հաճախակի ընդմիջում անել՝ ձեռքերը լվանալու համար:
- Յուրաքանչյուր աշխատողի հանձվում է իր սեփական գործիքները, սարքավորումներն ու սահմանված աշխատանքային տարածքը:
- Այս Արձանագրության պատճեն բաժանվել է բոլոր աշխատակիցներին:
- Ընտրովի—Նկարագրել այլ միջոցառումները՝

Բ. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ՆՇԵԼ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՏՎՅԱԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

- Ավտոմեքենաների վազման ցանկացած փակ տարածքներում զբաղվածությունը սահմանափակվում է ներսի առավելագույն զբաղվածության 35%-ով:
 - Առավելագույն զբաղվածությունը՝ համաձայն 35% զբաղվածության սահմանի՝

- Աշխատավայրում աշխատակիցների քանակը ցանկացած պահի սահմանափակված է, որպեսզի աշխատակիցները պրակտիկորեն հեշտությամբ կարողանան առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանել միմյանցից:

Հաստատությունում աշխատակիցների առավելագույն թիվը սահմանափակված է՝

- Առնվազն 6 ոտնաչափ հեռավորությամբ տեղադրվում են ժապավեններ կամ այլ զծանշաններ բոլոր այն տարածքներում, որտեղ մարդիկ հերթ են կանգնում՝ և՛ աշխատավայրի ներսում, և՛ դրա հանրային մուտքերից դուրս, որտեղ նշանները կուղղորդեն աշխատակիցներին և այցելուներին հեռավորություն պահպանելու համար օգտագործել զծանշանները:
- Հերթում սպասելիս և մեքենայի վազման ողջ ընթացքում հաճախորդները մնում են իրենց ավտոմեքենաներում, եթե դա ավտոմատ վազման կետ է:
- Եթե հաճախորդը պատվիրում է ներքին մաքրում և/կամ փոշեկուլով մաքրում, հաճախորդը պետք է դուրս գա ավտոմեքենայից և սպասի սպասման տարածքում:
- Հաճախորդների սպասման համար նախատեսված բոլոր տարածքները վերափոխվել են, որպեսզի հաճախորդները ունենան 6 ոտնաչափ հեռավորություն պահպանելու հնարավորություն: Բոլոր տարածքներում, որտեղ հաճախորդները կարող են շփում ունենալ աշխատակիցների կամ այլ հաճախորդների հետ, հաճախորդները պետք է կրեն կտորե դիմակ:
- Հանրության համար բաց բոլոր տարածքների (օր.՝ ընդունարանի կամ սպասասենյակի) կահույքը առանձնացված է՝ ֆիզիկական տարածության պահպանումը հնարավոր դարձնելու նպատակով:
- Հաստատությունում որոշվել է, որ այն հաճախորդները, որոնք օգտվում են ինքնասպասարկման փոշեկուլներից կամ այլ ինքնասպասարկման կայաններից, ի վիճակի են միմյանցից 6 ոտնաչափ հեռավորություն պահպանել: Եթե ոչ, ապա որոշ ինքնասպասարկման կայաններ փակվել են՝ հաճախորդների միջև ավելի մեծ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ

հեռավորություն ստեղծելու համար:

- Աշխատակիցներին հանձնարարվել է հաճախորդներից, այցելուներից և միմյանցից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանել: Աշխատակիցները կարող են մի պահ մոտենալ, երբ անհրաժեշտ է վճարում ընդունել, ապրանքներ կամ ծառայություններ մատուցել կամ այլ անհրաժեշտության դեպքում:
- Այն վայրերում, որտեղ հնարավոր չէ պահպանել ֆիզիկական հեռավորություն (օր.՝ դրամարկղերում), պլեքսի ապակի կամ այլ ֆիզիկական պատնեշներ են տեղադրվում:
- Հաճախորդների սպասարկման պատուհանները կամ սեղանները առանձնացվում են 6 ոտնաչափ հեռավորությամբ, որպեսզի հնարավոր լինի պահպանել ֆիզիկական հեռավորություն:
- Ընդմիջման սենյակներում և խոհանոցներում սեղանների/աթոռների միջև ֆիզիկական հեռավորությունը ավելացվել է՝ հնարավոր դարձնելով ֆիզիկական հեռավորության պահպանումը:
- Աշխատակիցներին խորհուրդ չի տրվում հավաքվել որևէ տարածքում, բայց հատկապես՝ ընդհանուր տարածքներում կամ բազմամարդ տարածքներում, օրինակ՝ ընդմիջման սենյակներում, ճաշարաններում և սանհանգույցներում:
- Անձամբ հանդիպումները կտրականապես խորհուրդ չեն տրվում. նախապատվություն է տրվում վիրտուալ հանդիպումներին: Եթե անձամբ հանդիպումներն անհրաժեշտություն են, ապա դրանք պետք է սահմանափակվեն առավելագույնը 10 կամ ավելի քիչ մասնակիցներով: Բոլոր մասնակիցները պետք է կրեն կտորե դիմակներ: Հանդիպումներն անց են կացվում մեծ սենյակներում, որտեղ հնարավոր է ֆիզիկական հեռավորություն պահպանել:

Գ. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ՆՇԵԼ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՏՎՅԱԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

Ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգը (HVAC) պատշաճ աշխատանքային վիճակում է, իսկ օդափոխությունն առավելագույնս բարելավվել է:

- Ցանկալի է տեղադրել բարձր արդյունավետության շարժական օդային զտիչներ, արդիականացնել շինության օդային ֆիլտրերը և կատարել այլ փոփոխություններ՝ մեծացնելու գրասենյակներում և այլ տարածքներում արտաքին օդի քանակը:
- Առավելագույնս բացառվում է իրերի (օր.՝ սրբիչներ, մաքրող նյութեր, փոշեծծիչ խողովակներ և այլն) համատեղ օգտագործումը:
- Մասնագիտացված մաքրման ծառայության կողմից կանոնավոր կերպով իրականացվում է աշխատասենյակի ողջ տարածքի մանրակրկիտ մաքրում:
- Հնարավորության սահմաններում դռները, աղբարկղերը և այլ իրերը աշխատում են առանց հպման:
- Ընդհանուր տարածքները և ձեռքերի հետ հաճախ շփում ունեցող մակերեսները՝ սեղանները, դռների բռնակները, լույսի վարդակները, աշխատասեղանները, բռնակները, հեռախոսները, ստեղնաշարները, սենսորային Էկրանները, պարագաները, բազրիքները, վճարման տերմինալները, լվացման սարքերը, վաճառող կամ մաքրող ապարատները կանոնավոր կերպով ախտահանվում են Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված ախտահանիչ միջոցներով՝ ըստ արտադրողի օգտագործման հրահանգների:
- Ախտահանիչներն ու այլ պարագաները բոլոր աշխատակիցների համար հասանելի են հետևյալ վայր(եր)ում՝ _____

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ

- Առկա են անհայում վճարման համակարգեր, իսկ դրանց բացակայության դեպքում վճարման համակարգերը կանոնավոր կերպով ախտահանվում են: Նկարագրել՝
-
- Հնարավորության դեպքում հաճախորդների սպասարկման տարածքներում և ընդունարաններում տեղադրված են պլաստիկ պատնեշներ՝ սահմանափակելու համար աշխատակիցների և հաճախորդների/այցելուների միջև շփումը:
 - Ինքնասպասարկման տարածքները (օրինակ՝ փոշեկուլի ծորակներն ու խողովակները, սենսորային էկրանները, մետաղադրամների արկղերը, վաճառող ապարատները, ձգանները/լարերը և աղբարկղերը) վերահսկվում են անձնակազմի կողմից և հաճախակի ախտահանվում են Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված ախտահանիչներով՝ ըստ արտադրողի օգտագործման հրահանգների:
 - Արտաքին մանրակրկիտ մաքրման աշխատանքների համար պետք է ունենալ ժամադրություն: Յուրաքանչյուր հաճախորդի մասին ինֆորմացիան պահվում է ժամադրությունների մատյանում, որտեղ գրանցվում է հաճախորդի անունը, հեռախոսահամարը և էլ. փոստի հասցեն:
 - Արտաքին մանրակրկիտ մաքրման ծառայությունների համար ավտոմեքենաների լվացման կետ ժամանելով՝ հաճախորդը վարում է իր մեքենան դեպի հատկացված տարածք: Հատկացված տարածքում կան առանց հպման աշխատող աղբարկղեր, իսկ մեքենայի շուրջը կա բավականաչափ տարածք, որպեսզի մեքենայի վրա աշխատող աշխատակիցը կարողանա մյուս աշխատակիցներից կամ հաճախորդներից պահպանել 6 ոտնաչափ հեռավորություն: Հնարավորության չափով աշխատակիցները պետք է խուսափեն մեքենա մոտելուց, իսկ ծառայության ավարտից հետո հաճախորդը պետք է մեքենան վերցնի այնտեղից, որտեղ թողել է:
 - Եթե ներքին մանրակրկիտ մաքրման և ավտոմեքենայի ներքին մաքրման ծառայություններ են առաջարկվում, ապա դա արվում է միայն ժամադրությամբ : Յուրաքանչյուր հաճախորդի մասին ինֆորմացիան պահվում է ժամադրությունների մատյանում, որտեղ գրանցվում է հաճախորդի անունը, հեռախոսահամարը և էլ. փոստի հասցեն:
 - Ներքին մաքրման ծառայությունների համար ավտոմեքենաների լվացման կետ ժամանելով՝ հաճախորդը վարում է իր մեքենան դեպի ներքին մաքրման համար հատկացված տարածք: Հատկացված տարածքում կան առանց հպման աշխատող աղբարկղեր, իսկ մեքենայի շուրջը կա բավականաչափ տարածք, որպեսզի մեքենայի վրա աշխատող աշխատակիցը կարողանա մյուս աշխատակիցներից կամ հաճախորդներից պահպանել 6 ոտնաչափ հեռավորություն: Հաճախորդը թողնում է իր մեքենան և վերցնում է այն ծառայության ավարտից հետո:
 - Յուրաքանչյուր մեքենայի ներքին մաքրման աշխատանքը կատարվում է միայն մեկ աշխատակցի կողմից, որպեսզի հնարավոր լինի պահպանել համապատասխան ֆիզիկական հեռավորություն: Աշխատակիցներն օգտագործում են անհատական պաշտպանիչ միջոցներ (PPE), օրինակ՝ մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ, մեկանգամյա օգտագործման խալաթներ և կտորե դիմակներ: Հնարավորության սահմաններում մեքենան մաքրման գործընթացի ժամանակ լավ օդափոխվում է (օր.՝ բացվում են բոլոր պատուհաններն ու դռները):

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ

- Ցանկացած անհատական պաշտպանիչ միջոց, որն օգտագործվում է մեքենայի ներքին մաքրման համար, հեռացվում և դեն է նետվում մաքրման աշխատանքից հետո, իսկ աշխատակիցը ձեռնոցներն ու անհատական պաշտպանիչ միջոցները հանելուց հետո առնվազն 20 վայրկյան լվանում է ձեռքերը օճառով ու ջրով կամ օճառի և ջրի բացակայության դեպքում օգտագործում է առնվազն 60% սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոց:
- Սրբիչով չորացման ծառայություններն առաջարկվում են միայն արտաքին լվացման ծառայությունների համար: Բացառվում է աշխատակիցների կողմից սրբիչների համատեղ օգտագործումը, իսկ սրբիչները լվացվում են կանոնավոր գրաֆիկով:
- Հաստատություն ժամանող այցելուներին հիշեցվում է, որ նրանք հաստատությունում կամ հաստատության տարածքներում գտնվելու ողջ ընթացքում (բացառությամբ՝ ուսուցիչ կամ խմելիս, եթե կիրառելի է) պետք է կրեն դիմակներ: Սա վերաբերվում է բոլոր մեծահասակներին և 2 տարեկանից բարձր երեխաներին: Այս պահանջից ազատվում են միայն այն անձինք, որոնք բուժաշխատողի կողմից դիմակ չկրելու հրահանգ են ստացել: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությունն ապահովելու համար՝ պետք է ունենալ դիմակներ այն այցելուների համար, որոնք ժամանում են առանց դիմակների:
- Հաստատություն մուտք գործելուց առաջ իրականացվում են այցելուների [ստուգումներ](#): Ստուգումը ներառում է հագի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի ստուգում, **ինչպես նաև ստուգում արդյոք անհանող գտնվում է ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո**: Նշված ստուգումներն իրականացվում են անձամբ կամ այլընտրանքային մեթոդների միջոցով, օրինակ՝ առցանց գրանցման համակարգերի կամ հաստատության մուտքի մոտ տեղադրված [ցուցանակների](#) միջոցով, որտեղ ասվում է, որ նման ախտանիշներ ունեցող այցելուները չպետք է մտնեն տարածք: Ձեռքի ախտահանիչները, օճառն ու ջուրը, անձեռոցիկները և աղբարկղերը հասանելի են հանրությանը հաստատության մուտքի մոտ կամ մոտակայքում, ընդունարանում և աշխատավայրի ներսում ցանկացած տարածքում կամ անմիջապես դրսում, որտեղ մարդիկ անմիջական շփում են ունենում:
- Ընդմիջման սենյակները, պետքարանները և այլ ընդհանուր տարածքները հաճախակի ախտահանվում են հետևյալ գրաֆիկով.
 - Ընդմիջման սենյակներ՝ _____
 - Պետքարաններ՝ _____
 - Այլ՝ _____
- Ընտրովի-Նկարագրել այլ միջոցառումները (օր.՝ միայն տարեցների համար նախատեսված ժամեր):

Դ. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Այս արձանագրության պատճեն փակցված է հաստատության բոլոր մուտքերի մոտ:
- Տեղադրվում է ցուցանակ, որը հստակ ուղղություն է ցույց տալիս հանրությանն այն մասին, թե ինչպես անվտանգություն պահպանել հաստատության ներսում (օր.՝

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ

պահպանել ֆիզիկական հեռավորություն, դիմակ կրել և այլն):

- Հաստատության յուրաքանչյուր հանրային մուտքի մոտ տեղադրվում է ցուցանակ, որը տեղեկացնում է բոլոր աշխատակիցներին ու հաճախորդներին, որ հազ կամ ջերմություն ունենալու դեպքում նրանք պետք է խուսափեն հաստատություն մտնելուց:
- Աշխատավայրի առցանց ազդագրերը (համացանցային կայք, սոցիալական լրատվամիջոց և այլն) հստակ տեղեկատվություն են տրամադրում ժամերի, դիմակ կրելու անհրաժեշտության և այլ կարևոր հարցերի մասին:

Ե. ԽԻՍՏ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՑԱՌՈՒՄՆԵՐ

- Հաճախորդների համար խիստ կարևոր ծառայություններին առաջնահերթություն է տրվել:
- Այն գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա, կատարվում են առցանց:
- Ձեռնարկվում են միջոցառումներ՝ ապրանքների և ծառայությունների հասանելիությունն ապահովելու այն հաճախորդների համար, որոնք ունեն շարժունակության սահմանափակումներ և/կամ հանրային տարածքներում գտնվում են բարձր ռիսկի տակ:

Ցանկացած լրացուցիչ միջոցառումներ, որոնք չեն ներառված վերևում, պետք է նշվի առանձին էջերով, որոնք բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության մասին ցանկացած հարցի կամ մեկնաբանության համար կարող եք կապվել հետևյալ անձի հետ՝

**Բիզնեսի
կոնտակտային
անուն՝**

Հեռախոսահամար՝

**Վերջին
վերանայման
ամսաթիվ՝**
